ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
Արեւելագիտության ինստիտուտ
Институт востоковедения НАН РА / Institute of Oriental Studies NAS RA

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային գիտաժողով՝ նվիրված
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելքի բաժնի ստեղծման 40-ամյակին եւ նրա հիմնադիր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանի մահվան 5-րդ տարելիցին
Երեւան, 12-13 դեկտեմբերի, 2016

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

АРМЕНИЯ И ВОСТОЧНОХРИСТИАНСКАЯ ЦИВИЛИЗАЦИЯ

Международный симпозиум, посвященный
40-летию создания Отдела Христианского Востока Института востоковедения НАН РА и 5-й годовщине смерти его основоположника, профессора Паруйра Мурадяна
Ереван, 12-13 декабря, 2016

ДОКЛАДЫ И ТЕЗИСЫ ДОКЛАДОВ

ARMENIA AND ORIENTAL CHRISTIAN CIVILISATION

International Conference dedicated to the
40th anniversary of the Department of Christian Orient at the Institute of Oriental Studies, NAS RA and in memoriam to its founder
Prof. Paruyr Muradyan (1933-2011)
Yerevan, 12-13 December 2016

PAPERS AND ABSTRACTS OF PAPERS

Երեւան Ереван Yerevan – 2016

Աթայան Տաթեւիկ
Երեւանի պետական համալսարան

Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակային պատկանելության հարցը

Ավանդաբար Սմբատ Սպարապետին վերագրվող «Տարեգրքի» հեղինակի խնդիրը տեւական ժամանակ է, ինչ գտնվում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Թեեւ այս խնդրին անդրադարձել են մի շարք հետազոտողներ[1], սակայն «Տարեգրքի» հեղինակային պատկանելության հարցը դեռեւս որոշ կողմերով մնում է վիճահարույց եւ հստակեցման կարիք ունի:

Այսպես, Լ. Բաբայանը, անդրադառնալով «Տարեգրքի» հեղինակային պատկանելության խնդրին, կասկածի տակ է առնում Սմբատ Սպարապետի՝ հեղինակը լինելու տեսակետը: Ուսումնասիրելով եւ մասամբ միայն համեմատելով «Տարեգրքի» Վենետիկի, Էջմիածնի եւ Փարիզի հրատարակությունները՝ նա պնդում է, որ Սմբատ Սպարապետի՝ առաջին դեմքի եզակի եւ հոգնակի թվով նշումները, համոզիչ ու հիմնավոր փաստարկներ չեն վերջնական եզրակացության հանգելու համար: Հետազոտողը նշում է, որ բացատրելի չէ, թե ինչու է հեղինակն իր մասին խոսում տարբեր դեմքերով, կամ Սմբատն ինչու է ողջ երկում անվանվում սպարապետ եւ միայն «ես»-եր պարունակող էջերում չորս անգամ հիշատակվում գունդստաբլ տիտղոսով:

Օրինաչափ համարելով ուսումնասիրողի հայտնած կասկածները՝ հարկ է նշել, որ նա հենվում է «Տարեգրքի» ձեռագրերի հիմնականում մեկ խմբի (Բ) տարընթերցումների վրա, այնինչ երկի Ա ձեռագրախումբը մնում է ստվերում: Իսկ մերժել Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները, փաստարկներ բերելով միայն մեկ ձեռագրախմբի գրչագրերից, արդարացված համարել չի կարելի, թեկուզ այն պատճառով, որ «Տարեգրքի» Բ խմբի ձեռագրերը ուշ շրջանի ընդօրինակություններ են:

---

[1] **Ա. Գ. Գալստյան**, Սմբատ Սպարապետ, Եր., 1961, էջ 74-92; **Լ. Հ. Բաբայան**, Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակի հարցը, – ՊԲՀ, 1976, հմր 1, էջ 243-254; **S. Der Nersessian**, The Armenian Chronicle of the Constable Smbat or of the «Royal Historian», – Dumbarton Oaks Papers, XIII, 1959, p. 141-168; La chronique attribuée au **Connétable Smbat**. Introduction, traduction et notes par **G. Dédéyan**, Paris, 1980, p. 9-37.

Լ. Բաբայանի միակ նկատառելի դիտարկումն այն է, որ Սմբատ Սպարապետի անունից գրված մեջբերումները չենք գտնում Ա խմբի միակ եւ հնագույն ձեռագրում (Վենետիկ, հմր 1308): Հետեւաբար, Սմբատի՝ «սպարապետ» կամ «գունդստաբլ» կոչվելը, կամ որ տողում, քանի անգամ եզակի ու հոգնակի թվով ներկայանալու պարզ հաշվարկը՝ որեւէ էական արդյունքի չեն հանգեցնում. անհետեւողականությունը կարող է հավասարապես պայմանավորված լինել եւ՛ խմբագրի, եւ՛ հետագա ընդօրինակողների միջամտությամբ:

«Տարեգրքի» ամենահին ձեռագրում Սմբատ Սպարապետին վերաբերող արտահայտությունների արձանագրված չլինելու փաստը ստիպում է մտածել, որ դրանք հետագա ընդմիջարկության արդյունք են: Այդ դեպքում՝ ո՞ւմ կողմից եւ ի՞նչ նպատակով են ավելացվել այդ նշումները: «Տարեգրքի» երկու խմբագրությունների համադրումը ցույց է տալիս, որ Ա եւ Բ ձեռագրախմբերը պարունակում են մի շարք էական տարբերություններ, այդ թվում նաեւ բազմաթիվ հավելում-հապավումներ: Սակայն դրանց համադրումը, ինչպես նաեւ «Տարեգրքի» սկզբնաղբյուր Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» հետ, ի հայտ է բերում մի հետաքրքիր իրողություն: Բ ձեռագրախմբի խմբագիրը, որն ամենայն հավանականությամբ նաեւ «Տարեգրքի» շարունակողն է, կատարելով մի շարք էական ընույթի փոփոխություններ, երկի շարադրանքը հարմարեցնում է որոշակի նպատակի: Համապատասխան հավելում-հապավումների միջոցով նա ձգտում է ընթերցողի ուշադրությունը սեւեռել Հեթումյանների եւ նրանց գործունեության վրա՝ նպատակ ունենալով արքայական գերդաստանը ներկայացնել հնարավորինս բարենպաստ լույսի ներքո: Մի կողմից՝ «Տարեգրքի» Բ ձեռագրախմբի խմբագրի հստակ դրսեւորվող վարքագիծը, իսկ մյուս կողմից՝ բուն տեքստում տեղ գտած փոփոխությունների ոճական ու լեզվական առանձնահատկությունները, թույլ են տալիս եզրակացնել, որ Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» հեղինակը լինելու մասին հատվածները նույնպես պատկանում են խմբագրի գրչին:

Այս վարկածի առիթով տեղին է վերհիշել Հ. Ղ. Ալիշանի դիտարկումը. «Սմբատ Գունդստապլ բարեբաղդ գտնուեր է նաեւ իր պարզ գրածին շարունակող գտնելու իր արիւնախառն եւ շատ մասամբ իր նման մէկ մը, իր Լեւոն որդւոյ դստեր Մարիանի փեսայն, մարաջախտն Պաղտին, որ գտնելով Գունդստապլի գրածը՝ յանձներ է Խորնի Վանաց առաջնորդ Կոստանդինի՝ նորոգել եւ հաւանօրէն շարայարել զ Պատմու-

թիւնն»[1]: Տեղեկության սկզբնաղբյուրը, թերեւս, մեզ անհայտ՝ Պաղտին Մարաջախտի՝ իր գործածած ձեռագրերում թողած հիշատակարաններն են, ուր Պաղտինը նշումներ է կատարել է իր ազգաբանության վերաբերյալ: Պետք է ենթադրել, որ վերը նշված փոփոխությունները պատկանում են Խորնի վանքի առաջնորդ Կոստանդինի գրչին: Նշենք, որ «կասկածելի» նշումների ծագման աղբյուրի որոշակիացումը ոչ մի կերպ չի հերքում Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները:

Անդրադառնանք Լ. Բաբայանի մյուս դիտարկումներին՝ «Տարեգրքում» Հեթումյան արքայատոհմի ներկայացուցիչների վերաբերյալ հաղորդումներում հեղինակի «անտարբեր վերաբերմունքին», երկում ռազմական գործողությունները մանրամասն չներկայացնելուն եւ Սմբատ Սպարապետի՝ որպես զորավարի «լրիվ անտեսված» լինելուն: Նշենք, որ հետազոտողը միայն մասամբ է իրավացի, քանի որ Սմբատ Սպարապետի զուսպ կեցվածքը նման տպավորություն է թողնում ընդամենը առաջին հայացքից: Երկի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Տարեգրքի» հեղինակի դիրքորոշումները միանգամայն այլ բացատրություն ունեն: Այսպես, անդրադառնալով թագավորական ընտանիքի անդամներին՝ հեղինակը մանրամասն պատմել է Հեթումյանների եւ նրանց շուրջ ծավալված իրադարձությունների մասին, նախընտրելով ցույց չտալ իր անձնական կապը նրանցից որեւէ մեկի հետ: Հեղինակը Հեթումյանների մասին խոսելիս դիմում է «նրանց» դերանվան օգնությանը, որն էլ ստեղծում է արքայատոհմից օտարված լինելու տպավորություն: Սակայն նկատենք, որ հեղինակը նույն մոտեցումն է ցուցաբերում ոչ միայն Հեթումյանների, այլ նաեւ Ռուբինյանների, այլեւայլ հայ իշխանների եւ երբեմն առհասարակ հայերի նկատմամբ: Այսպիսով, տոհմակիցներին ու ազգակիցներին «օտար բեւեռում» դիտարկելը պայմանավորված է նրա ստեղծագործական ոճի առանձնահատկությամբ եւ ոչ մի կերպ չի կարող հիմք հանդիսանալ Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները մերժելու համար:

«Տարեգրքում» ռազմական գործողությունները մանրամասն ներկայացված չլինելու իրողությունը բացատրելիս պետք է նկատի ունենալ երկու կարեւոր հանգամանք. նախ՝ հեղինակը հիմնական գծերով է շարադրում միայն իրենից տարածության եւ ժամանակի առումով հեռու դեպքերը, որոնք հիմնականում ներկայացված են «Տարեգրքի» քաղա-

---

[1] **Հ. Ղ. Ալիշան**, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ – Ս. Ղազար, 1901, էջ 113:

գրական հատվածում: Նույնը չի կարելի ասել երկի ինքնուրույն մասի վերաբերյալ, ուր, որպես ականատես, հեղինակը ռազմական անցուդարձերը անհամեմատ ավելի հանգամանորեն է ներկայացնում: Ապա՝ հարկ է նշել, որ «Տարեգրքում» ներկայացված քաղաքական, ռազմական, կրոնական եւ այլ բնույթի տեղեկություններն ու դրանց ծավալները պայմանավորված են նախ եւ առաջ հեղինակի՝ իր առջեւ դրված խնդիրներով: Ուստի որոշակի բնույթի իրադարձություններին շատ մանրամասն չանդրադառնալը նույնպես հիմնավոր փաստարկ չէ Սմբատ Սպարապետին հեղինակ չհամարելու համար: Բացի այդ, «Տարեգրքի» բովանդակության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հեղինակը քաջածանոթ է իր ժամանակի ռազմական-քաղաքական անցուդարձերին, իսկ որոշ դեպքերում առավել քան հանգամանալից է լուսաբանում: Այսպես, «Տարեգրքում» Հեթումի Ա-ին վերաբերող հատվածում հիմնականում արձանագրված են հենց նրա ռազմական ձեռնարկումները:

Սմբատ Սպարապետի զորավարական գործունեությունը եւս «լրիվ անտեսված» չէ: Միայն Հեթում Ա-ի մասին պատմող տեղեկությունների մանրամասն եւ բովանդակալից լինելու պատճառով է, որ սպարապետը հայտնվում է արքայի ստվերում: Հեղինակն այդպես է վարվում, քանի որ նրա ուշադրության կենտրոնում, անկասկած, Կիլիկիայի հայկական թագավորության արքան է, այլ՝ ոչ սպարապետը: Նկատենք, որ նույն մոտեցումն է ցուցաբերվում նաեւ խաչակրաց իշխանությունների, բյուզանդական կայսրության պարագայում. առաջին պլանում է թագավորը, կայսրը, բայց՝ ոչ երբեք զորավարը: Պետք է նկատի ունենալ նաեւ հեղինակային ոճի խնդիրը: «Տարեգրքի» վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակին բնորոշ է իր անձը թաքցնելու միտումը. նա չի ձգտում ինքնադրսեւորման ո՛չ որպես հեղինակ, եւ ո՛չ որպես նկարագրվող իրադարձությունների անմիջական մասնակից: Հեղինակը գնահատականներ է տալիս դեպքերին եւ դեմքերին, բայց միեւնույն ժամանակ չի առանձնացնում իրեն սեփական սոցիալական միջավայրում: Հավանաբար, հեղինակը միտումնավոր է օտարում սեփական «ես»-ը՝ բովանդակությանը անկողմնակալություն հաղորդելու նպատակով: Թերեւս, սրանով է բացատրվում նաեւ հեղինակի՝ «Տարեգրքում» երրորդ դեմքով ներկայանալու մոտեցումը:

Ուսումնասիրողներից Ժ. Դեդեյանը կարծում է, որ Սմբատ Սպարապետի զբաղվածությունը քաղաքական-դիվանագիտական գործունեությամբ՝ պետք է թույլ չտար նրան շարադրել պատմական աշխատություն: Սակայն, եթե առաջնորդվենք այս տրամաբանությամբ, պետք է

բացառենք նաեւ Սմբատ Սպարապետի կողմից ոչ միայն «Տարեգրքի», այլ նաեւ «Դատաստանագրքի» կազմումը, «Անտիոքի ասսիզների» թարգմանությունը եւ այլ աշխատանքների նախաձեռնումը: Ժ. Դեղեյանը նաեւ մատնանշում է «Տարեգրքի» բնագրի եւ «Դատաստանագրքի» ու «Անտիոքի ասսիզների» հիշատակարանների լեզվական տարբերությունները: Այս դեպքում էլ անտեսվում են աշխատություններից յուրաքանչյուրի ստեղծման նպատակն ու գործածության միջավայրը: Ի վերջո Ժ. Դեղեյանը գալիս է այն եզրահանգման, որ «Տարեգրքի» հեղինակը հոգեւորական է, արքունական գրասենյակի դպիր, հավանաբար՝ Սմբատ Սպարապետի եղբայր, Դրազարկի առաջնորդ, Սսի արքեպիսկոպոս Բարսեղը: Սակայն քննությունը ցույց է տալիս, որ «Տարեգրքի» հեղինակն աշխարհիկ անձ է: Այսպես, նա կրճատում, իսկ երբեմն նաեւ իսպառ անտեսում է սկզբնաղբյուրների կրոնա-բարոյագիտական բնույթի դրվագները, աստվածաշնչյան մեջբերումները, հրաշքների եւ նախախնամության մասին հատվածները եւն: Մյուս կողմից՝ հեղինակը մեծ տեղ է հատկացնում հատկապես քաղաքական պատմությանն առնչվող հաղորդումներին՝ որոշակի դարձնելով իր սոցիալական պատկանելությունը: Նա ոչ թե սոսկ աշխարհիկ հեղինակ է, այլ Կիլիկյան Հայաստանի ռազմա-քաղաքական վերնախավի ներկայացուցիչ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ բավականին ծանրակշիռ հիմքեր կան Սմբատ Սպարապետին վերստին «Տարեգրքի» հեղինակ համարելու համար: